Կ Ա Ր Ծ Ի Ք

ԱՐՄԵՆ ՍԱՄՎԵԼԻ ԱՎԵՏԻՍՅԱՆԻ «ՈՒՍԱՆՈՂՆԵՐԻ ՎՐԱ ԱՊԱՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅԱՆ ՍՈՑԻԱԼ-ՀՈԳԵԲԱՆԱԿԱՆ ԴԵՍՏՐՈՒԿՏԻՎ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ԿԱՆԽԱՐԳԵԼՄԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ»

ԺԹ.00.03 «ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՀՈԳԵԲԱՆՈՒԹՅՈՒՆ» ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅԱՄԲ ՀՈԳԵԲԱՆԱԿԱՆ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԹԵԿՆԱԾՈՒ ԳԻՏԱԿԱՆ ԱՍՏԻՃԱՆԻ ՀԱՅՑՄԱՆ ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ

Ապատեղեկատվությունն ու կեղծ լուրերը նոր երևույթ չեն: Եթե նախկինում «կեղծ լուրերը» տարածվում էին միայն ավանդական հաղորդակցության միջոցներում (գլխավորապես՝ մամուլում), ապա այսօր այն արագորեն տարածվում է առցանց լրատվակայքերում ու սոցիալական ցանցերում՝ ընդգրկելով անհամեմատ ավելի մեծ լսարան և ապահովելով տեղեկության տարածման ավելի մեծ արագություն: Նաև հիմնականում հենց նշված պատճառով ապատեղեկատվության և «կեղծ լուրերի» դեմ պայքարի հարցը վերջին տարիներին շատ երկրներում առաջնային կարևորության խնդիրների շարքում է: Որոշ երկրներում արդեն իսկ փորձ է արվել օրենսդրական կարգավորումների միջոցով սահմանել սոցիալական ցանցերում ապատեղեկատվության դեմ պայքարի մեխանիզմները: Խնդիրն արդիական է նաև Հայաստանում:

Կեղծ տեղեկությունների կարող ենք հանդիպել ցանկացած ոլորտում՝ լինի դա կրթություն, քաղաքականություն, արվեստ, սպորտ, ժամանց, թե այլ որևէ ոլորտ: Բացի այդ, կեղծ տեղեկությունը կարող է ստանալ տագնապալի բնույթ և նույնիսկ վտանգել մարդու կյանքը: Այս համատեքստում, այսօր, առավել քան երբևէ արմատական դերն ու նշանակությունը պատկանում է համացանցին, որը տեղեկատվության ձեռքբերման ամենահիմնական աղբյուրն է և այն ոչ միայն իբրև զուտ տեղեկատվության ձեռքբերման աղբյուր է, այլև ուսուցման, ժամանցի, ամենաբազմազան ծառայությունների մատուցման, հեռավար հաղորդակցման, աշխատանքի որոնման, և այլ գործունեության տեսակների և բնականաբար,

սոցիալական կյանքի ամենատարբեր ոլորտների մասնակիցների վրա տեղեկատվական հաղորդակցական տեխնոլոգիաների, համացանցի բացասական սոցիալ-հոգեբանական ազդեցությունն էլ տարաբովանդակ է: Շարունակաբար ընդլայնվում է այս, համեմատաբար նոր հարթակում հաղորդակցվելու, նորանոր կապեր հաստատելու, նոր տեղեկույթ որոնելու պահանջմունքն ու մոտիվացիան: Մինչդեռ պետք է արձանագրել այն հանգամանքը, որ հաճախ անձը դժվարանում է, չի կարողանում տարբերակել իրականությունը մտացածինից, իրականը կեղծիքից, ինչը վտանգում է նախ անձի, ապա հասարակության հոգեկան առողջությունը, հոգեբանական ներդաշնակությունը: Փաստ է, որ այսօր դժվար է պատկերացնել կյանքն առանց համացանցի:

Սույն ատենախոսության շրջանակում ուսումնասիրվել է ուսանող երիտասարդության վրա ապատեղեկատվության դեստրուկտիվ սոցիալ-հոգեբանական ազդեցության մեխանիզմները, ձևերը, ուղղությունները, հետևանքները, կանխարգելման ուղիները: Թեև այս ուղղությամբ առկա են արդեն բազմաթիվ հետազոտություններ, մասնավորապես ինչ վերաբերում է անձի, հասարակության գիտակցության, դիրքորոշումներին, հույզերի վրա ազդեցության մեխանիզմներին, սոցիալական տարբեր կարգավիճակներում, դիրքերում դրանց դրսևորման առանձնահատկություններին, դրանցով պայմանավորված վարքագծի փոփոխություններին, սակայն շատ ու շատ հարցեր դեռևս կարոտ են լուսաբանման ու նորովի մեկնաբանման:

Սույն հետազոտության հիմնական նպատակը եղել է ՀՀ-ում ուսանող երիտասարդների՝ համացանցից կախվածության դրսևորումների, նրանց վրա ապատեղեկատվության դեստրուկտիվ սոցիալ-հոգեբանական ազդեցության մեխանիզմների բացահայտումը, կանխարգելման ուղիների մշակումը, որից էլ բխել է հետազոտության օբյեկտը՝ այն է՝ ուսանողների վրա ապատեղեկատվության սոցիալ-հոգեբանական դեստրուկտիվ ազդեցությունը և առարկան՝ այն է. ուսանողների վրա ապատեղեկատվության սոցիալ-հոգեբանական դեստրուկտիվ ազդեցության մեխանիզմների, օրինաչափությունների բացահայտումն ու կանխարգելումը: Իր առջև դրված նպատակի իրականացման համար ատենախոսը ձեռնամուխ է եղել գիտական գրականության մեջ անձի վրա ապատեղեկատվության դեստրուկտիվ ազդեցության, դրանց կանխարգելման սոցիալ-հոգեբանական մոտեցումների վերհանմանն ու ուսումնասիրմանը, ապատեղեկատվության հակվածություն ունեցող ուսանողների, նրանց անձնային առանձնահատկությունների, ագրեսիվության, տագնապայնության, ինքնավերաբերմունքի, համացանցային

կախվածության բացահայտմանը: Ատենախոսության առանցքային դրական և գնահատելի կողմերից արժանի է նշել այն, որ ուսանողների վրա ապատեղեկատվության սոցիալ-հոգեբանական դեստրուկտիվ ազդեցության կանխարգելման նպատակով՝ մշակվել և իրականացվել է «Հոգեբանական պատրաստություն և մեդիագրագիտություն» ինտեգրված համապիտանի թրենինգ-դասընթացի ծրագիր՝ առարկայական նկարագրով և թեմատիկ տրոհմամբ, իրականացվել ռեթեստավորում «Հոգեբանական պատրաստություն և մեդիագրագիտություն» ինտեգրված համապիտանի թրենինգ-դասընթացից հետո: Հետաքրքրական է ատենախոսի կողմից առաջադրած վարկածն առ այն, որ ուսանողների վրա ապատեղեկատվության սոցիալ-հոգեբանական դեստրուկտիվ ազդեցության կանխարգելումը հնարավոր է, եթե ուսանողը ապատեղեկատվության սոցիալ-հոգեբանական դեստրուկտիվ ազդեցության մեխանիզմների, դրսևորումների իմացության և ինքնակառավարման կարողությունների հիման վրա օբյեկտիվ գնահատի իրավիճակը, կանխատեսի հնարավոր բացասական հետևանքները: Իբրև հետազոտության հենք՝ ատենախոսը հենվել է հոգեբանության ռահվիրաների՝ Է. Ֆրոմի, Է. Բերնի հիմնադրույթների, համացանցում անձի «ես» հիմնադրույթի Տ. Բրաբազոնի մոտեցումների, թվային տեխնոլոգիաների և հասարակության հարաբերությունների Մ. Քաստելսի մոդելի, Ք. Յանգի՝ համացանցից անձի կախվածության, Ս. Ն. Արֆխանովայի, Ե. Ա. Միխեևի, Տ. Ա. Նեստիկի, Մ. Կ. Ջոնսոնի, Մ. Ի. Դոլգովի՝ ապատեղեկատվության նկատմամբ անձի վերաբերմունքի, հետևանքների, կանխարգելմանը վերաբերող մոտեցումներին:

Հետազոտության իրականացման նպատակով կիրառվել է բավականաչափ հուսալի մեթոդական ապարատ՝ այն է. Ռ. Քեթթելի «Անձի բազմագործոն ուսումնասիրման մեթոդիկան» (16-PF), Ա. Բասսի և Ա. Դարկի «Ագրեսիայի տիպերի և ցուցանիշների ախտորոշման մեթոդիկան», Չ. Դ. Սպիլբերգերի և Յու. Լ. Հանինի «Տագնապայնության ինքնագնահատման մեթոդիկան», Վ. Վ. Ստոլինի և Ս. Պ. Պանտիլեևի «Ինքնավերաբերմունքի ուսումնասիրության», Կիմբեռլի-Յանգի «Համացանցից կախվածություն» մեթոդիկաները:

Սույն ատենախոսությունը հետազոտությամբ հանդերձ նոր խոսք ու նորովի մոտեցում է սոցիալական հոգեբանության գիտակարգում, քանզի իրականացված է լայնածավալ եռափուլ հետազոտություն՝ պրոբլեմային-որոնողական, համակարգման, արդյունքների մշակման և ընդհանրացման փուլայնությամբ, որի արդյունքում հիմնավորվել է, որ առկա է ուղիղ համեմատական կապվածություն ուսանողների՝ ապատեղեկատվության ազդեցությանը տրվելու հակվածության և

անձնային առանձնահատկությունների, իմացական, հուզական ոլորտների, համացանցից կախվածության միջև:

Գիտական նորույթ է այն, որ սույն հետազոտությամբ բացահայտվել է ապատեղեկատվության հակված ուսանողների հոգեբանական առանձնահատկությունները, որոնցից են՝ ոչ համարժեք ինքնագնահատականը, ցածր ինքնարժևորումը, ինքնաընդունումը, ինքնավերահսկումը, դյուրահավատությունը, հուզական անկայունությունը, նյարդայնությունը, իրադրային տագնապայնությունը, խոսքային և անուղղակի ագրեսիան, կասկածամտությունը:

Կատարված հետազոտության արդյունքների հավաստիությունն ու հիմնավորվածությունն ապահովված են՝ հոգեբանական հետազոտությունների ժամանակակից մեթոդաբանական սկզբունքներով, հետազոտության առարկային, նպատակին և խնդիրներին համապատասխան կիրառված, փոխադարձաբար իրար լրացնող նպատակահարմար մեթոդներով և անհրաժեշտ պոպուլյացիաներում հետազոտությունների թվաքանակով:

Հիմնախնդրի նկատմամբ նորովի մոտեցումն ու նոր արդյունքների վերհանումը արտացոլված են ատենախոսության դրույթներում: Մասնավորապես այն, որ ուսանողների՝ ապատեղեկատվության ազդեցության հակվածության անձնային հոգեբանական դետերմինանտներ են ինքնագնահատականի ադեկվատության ցածր աստիճանը, հուզական անկայունությունը, դյուրահավատության բարձր մակարդակը, գործնականության ցածր մակարդակը, բարձր ինքնավստահությունը, ցածր ինքնահսկողության բարձր մակարդակը, թուլացվածության բարձր մակարդակը, կասկածամտության և նյարդայնության բարձր մակարդակը: Նորովի մոտեցում ու նոր խոսք է՝ հոգեբանական գիտակարգում հետազոտության արդյունքում վերհանած այն գաղափարական հենքը, որ համացանցային կախվածության և ապատեղեկատվության հակվածության պատճառահետևանքային շղթայում առանցքային է ուսանող երիտասարդի՝ սեփական անձի մասին ունեցած ոչ ռեսուրսային գնահատականը՝ ցածր ինքնաընդունում, ինքնարժևորում, ինչպես նաև վատ ինքնակառավարումն ու ինքնավերահսկումը:

Սույն հետազոտության կիրառականությունը ապացուցում է այն դրույթը, որ հնարավոր է մարել ապատեղեկատվության բացասական պոտենցիալը, քանզի ուսանողական համակազմի հետ համապատասխան աշխատանքների իրականացման արդյունքում ուսանողը ապատեղեկատվության սոցիալ-

հոգեբանական դեստրուկտիվ ազդեցության ձևերի, դրսևորումների իմացության, սեփական անձի արժևորման, ընդունման, հուզական վիճակների ճանաչման և ինքնակառավարման կարողությունների հիման վրա կարող է օբյեկտիվ գնահատել իրականությունը և կանխարգելել հնարավոր բացասական հետևանքները:

Այնուամենայնիվ, ատենախոսության մեջ առկա են մեկնաբանության կարիք ունեցող հարցեր:

Մասնավորապես՝

1. Առավելապես մանրամասնելու կարիք ունի այն, թե ինչպե՞ս պետք է իրականացնել ուսանողների շրջանում ապատեղեկատվության սոցիալ-հոգեբանական դեստրուկտիվ ազդեցության կանխարգելումը:
2. Մեկնաբանման կարիք ունի այն պնդումը, որ ապատեղեկատվության հաջող կիրառմանն ու սոցիալական ընկալունակությանը նպաստում է տեղեկատվության ժամանակագրական սկզբունքով ներկայացումն ու համապատասխանաբար ընկալման ապահովման սոցիալ-հոգեբանական մեխանիզմը: Ո՞րն է այդ պնդման հիմքը:
3. Ապատեղեկատվության խնդիրը դիտարկելով սույն հետազոտության համատեքստում, որո՞նք են թիրախավորման վտանգները և մեխանիզմները՝ սոցիալական ցանցերով նպատակաուղղված, համակարգված և պլանավորված տեղեկատվական, հոգեբանական պատերազմների պայմաններում իրականացվող հակառակորդի հնարավոր գործողություններում :
4. Ատենախոսության մեջ առկա են որոշ տեխնիկական վրիպակներ ու սպրդումներ:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Արմեն Սամվելի Ավետիսյանի «Ուսանողների վրա ապատեղեկատվության սոցիալ-հոգեբանական դեստրուկտիվ ազդեցության կանխարգելման հիմնախնդիրը Հայաստանի Հանրապետությունում» վերնագրով ատենախոսությունն ինքնուրույն, ավարտուն, գիտական բարձր մակարդակով կատարված հետազոտություն է, որն ունի գիտատեսական և գործնական նշանակություն, արդյունքները հավաստի են, հրատարակված աշխատանքներն արտացոլում են ատենախոսության բովանդակությունը: Այն

համապատասխանում է ՀՀ գիտական աստիճանաշնորհման 7-րդ կետի պահանջներին և ԺԹ. 00. 03 «Սոցիալական հոգեբանություն» թվանիշին:

Պաշտոնական ընդդիմախոս՝

Հոգեբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Ն. Հակոբյան

Հոգեբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր

Ն. Հակոբյանի ստորագրությունը հաստատում եմ

ՀՀ ԳԱԱ ԳԿՄԿ գիտքարտուղար՝ Մ. Սարգսյան